№ 3 ՄԱՐՏ 1888

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

№ 3

«Աղբիւրի» գրականական ալբոմ—ԴԱՐՈՒՆ։

Տորք—Անգեղ և Հայկանուշ—գեղեցիկ . . . . . Ղ. Աղայեանց։
Բարեկենդան . . . . . Պեռճ Պռոշեանց։
Վարդանանց պատերազմը (ոտանաւոր) . . . . . Մ. Տ. Զաքարեանց։
Ծերենց (պատկեր և գրուԹիւն)
Մարտին ԼուԹեր (շարունակուԹիւն) . . . . . Փ. Վարդանեան։
Գարուն (ոտանաւոր) . . . . . Յակ. Ղազարեանց։
Մենաքէմ Գամաղայու պատմուԹիւնը (շար.) . . Յ. Յովհաննիսեան։

ԳԻՏՈՒԹԻՒՆ

Ամֆրիկայի պատկերներ . . . . . Ամբրոս։

ՀԵՏԱՔՐՔԻՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ԼուսանկարչուԹեան անգնահատելի ԾառայուԹիւնը։ Զիւն Սահմանում։ Մաքուան պատիժ ելէքտրականուԹեամբ։

ՀՈՒՄՈՐՃԱԼԻՔ

Հանելուկներ։ Առած։ Խնդիր։ Զահմատ։ Բեբուսի մրցանակ և բացատրուԹիւն։ ՆախընԹաց №-ի մէջ եղած հանելուկների բացատրուԹիւնը։

ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԻՆ

ՄԱՀԱՅՈՒՅՑԿ

Ծերենց (Յովսէփ Զիշմանեան)։
Դամբանական . . . . . Ան. Եզեկեան։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Աղթամար։ «Աղբիւրի» բաժանորդագրուԹիւնը։ Բաշինջաղեանի նուէրը։ Մեր հրատարակուԹիւնները։ Զատկուայ №։ ԱրուԹիւն եւ Մանուէլ։ Սամուէլ։ ՑայտարարուԹիւն։ Զատկուայ ընծաներ։ Մեր պատասխանատուուԹիւնը։ Վանատանոց։ Պրէմիան։ Մեծ-Ղարաքիլիսան։ «Աղբիւրի» նուիրողներ։ ՀանգանակուԹիւն։ Վարժուհիների ընկերուԹիւն։ Պատասխաններ։ ՅայտարարուԹիւններ։

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Զարունակվում է «Աղբիւրի» բաժանորդագրուԹիւնը։

ՍՊԱՌՈՒԱԾ ԵՆ №№ 1 և 2։

Սպառուած №№-ի փոխարէն նոր բաժանորդը կըստանայ 50 կ. գրքեր մեր հրատարակուԹիւններից և «Մենաքէմ» ու «Լուտեր» յօդուածների սկիզբը, որոնց շարունակուԹիւնը հետևեալ №№-ում էլ պիտի լինին։ Նոր բաժանորդ գրուողը կըստանայ բոլոր պրէմիաները և իրաւունք ունի մասնակցել «Աղթամարայ» վիճակահանուԹեան ու պայմանաւորուած մրցանակները ստանալու։

«ԱՂԲԻՒՐԻ» ՎԱՃԱՌԱՆՈՑ

Թիֆլիս, Գոլովինսկի պրոսպ. տ. Միրզոեվի

Թիֆլիսում բացված է «Աղբիւրի» վաճառանոց, յատկապէս երեխաների, աշակերտների և ընտանիքների համար: «Աղբիւրի» վաճառանոցում ծախվում են մանկական գրքեր, պատկերներ, նկարներ, նօտաներ, բազմատեսակ շքեղ իրեղէններ երեխաներին և աշակերտներին ընծայելու համար. դպրոցական և դասական հարուստ և բազմատեսակ պիտոյքներ. տպվում են նոյն վաճառանոցում մենոգրամներ (զարդարուն գլխատառեր նամակների ճակատներին). գրելու, փոստի և ՏՊԱՐԱՆԱԿԱՆ ամեն տեսակ ընտիր ԹՂԹԻ ՄԵԾ ՊԱՀԵՍՏ, որ կազմում է Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՎԱՐԴՈՒՆԻՆ ԵՂԲԱՅՐՆԵՐԻ ՀԻՆԱԿԱՒՈՐ ԹՂԹԻ ԳՈՐԾԱՐԱՆԻ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԸ:

Վաճառանոցը ընդունում է Ռուսաստանում և արտաքսմանում հրատարակուող մանկական թերթերի բաժանորդագրութիւն:

Վաճառանոցը կամենալով դիւրացնել դասառաբնակ հեղինակների, թարգմանիչների գործը, ընդունում է Թիֆլիսում տպագրել տալու նրանց աշխատութիւնները: Ընդունում է միջնորդ լինել և պատուիրել նրանց համար ամեն տեսակ պատկերներ, կլիշաներ: Վարձու է տալիս «Աղբիւրի» ծաղկատառերից և նկարներից:—Վաճառանոցն ընդունում է կոմիսիայով ծախելու զանազան հրատարակութիւններ:

Վաճառանոցում զետեղուած է և «Աղբիւրի» խմբագրութեան դրասենեակը:

Վաճառանոցը յանձն է առնում դասական և գիւղական ուսումնարանների համար կազմել գրադարաններ, քիմիական լաբորատորիաներ, ֆիզիկական կաբինետներ, մանկական խաղեր և դպրոցական ու մանկական հատակի վերարերեալ պարագաներ:

Վաճառանոցը ունի իւր սեպհական կազմարանը, պատրաստում է պատկերների համար ամեն տեսակ և կնանոց շրջանակներ: Պատուէրները կատարվում են ճշտութեամբ և անյապաղ:

Օտար քաղաքներից դիմում են՝ Тифлисъ. Магазинъ Дѣтскаго журнала „Агбюръ“. Իսկ հեռագրով՝ Тифлисъ. „Агбюръ“.

ԱՂԲԻՒՐ

ՄԻՇՏՈՒԵՑԻ ՊԱՏԿԵՐԱՋԱՐԴԻ ՀԱՆԴԷՍ
(Երեխաների եւ դաստիարակների համար)

Հրատարակվում է միեւնոյն դիրքով, միեւնոյն ուղղութիւնով եւ նոյն աշխատակիցների մասնակցութիւնով։

Հասցէն՝ Тифлисъ, Редакція „Агбюръ“, իսկ արտասահմանից՝ Tiflis (Caucase) Rédaction de la Revue „AGBUR“.

Խմբ.-Հրատ. Տ. Նազարեան։

ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ

ԲԱՐՈՅԱԿԱՆ, ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ, ԱՐՈՒԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ

Հրատարակութիւն Վիէնայի Մխիթարեան Միաբանութեան

Կը հրատարակուի ամէն ամսոյ սկիզբը։

Բաժանորդագրութեան գինն է կանխիկ 4 ր. Վեցամսեայ 2 ր. 50 կ. առանձին կը վաճառուի 1 ր.։

Հասցէն՝ A la Rédaction de la Revue „Hantess“ Au Convent des RR. PP. Mechitharistes A Vienne (Autriche) VII. Mechitharistengasse 4.

ԼԷՕ, ԾԱՅՐԵՐ

Վաճառվում է Թիֆլիսում «Աղբիւրի» Վաճառանոցում, Նուշում եղբ. Դաղիանների Գրավաճառանոցում. գինը 20 կ.։

Մամուլի տակ է եւ շուտով լոյս կը տեսնի

ՍԱՐԳԻՍ ՓԻԼՕԵԱՆԻ

«ԿՈՐԱԾ ՄԱՐԳԱՐԻՏ»

Վէպ—նկարագիր Նոր-Բայազիդի վարք ու բարքի. գինն է 50 կոպ. կարելի է ստանալ «Աղբիւրի» Վաճառանոցից։

1—1

Լոյս տեսաւ

ԲԱՓՓԻԻ

„ՍԱՄՈՒԷԼ“

ՊԱՏՄԱԿԱՆ ՎԷՊ

Առաջին Երկրորդ եւ Երրորդ դիրքը մի մեծ հատորի մէջ ամփոփուած.

ԳԻՆՆ Է 3 ՌՈՒԲԼ.

Օտարաքաղաքացիք պէտք է ուղարկեն նաեւ 50 կոպ. ճանապարհի ծախք։

Վաճառվում է հեղինակի մօտ այլեւ «Թիֆլիսի Կենդրոնական դրավաճառանոցում» եւ «Աղբիւրի» վաճառանոցում։

Հեղինակի հասցէն՝ Въ Тифлисъ. Акопу Меликъ-Акопіану (Раффи). Въ Редакціи „Арцаганкъ“.

Ա Զ Դ

Որովհետեւ Ծերենցի պատկերը անյաջող էր փորագրուել, այդ պատճառով այժմ չը տպեցինք։

По распоряженію г. министра Внутреннихъ дѣлъ, „Газета А. Гатцука“ пріостановлена изданіемъ на 8 мѣсяцевъ, т. е. до іюня 1888 года.

Изданія ея будетъ продолжаться съ 8-го іюня 1888 года на прежнихъ условіяхъ и въ возможно улучшенномъ составѣ и видѣ.

Подписчикамъ 1887 года. взамѣнъ опущенныхъ нынѣ мѣсяцевъ, «Газета», по возобновленіи ея въ іюнѣ. будетъ безплатно высылаться 4 мѣсяца, т. е. до 1 сентября 1888 года.

Подписка на 1888 годъ принимается съ іюня по 1-е января 1889 г. Подписная цѣна 4 руб. Редакторъ-издаетль **А. Гатцукъ.**

ԱՂԲԻՒՐ

ՄԻԱՄՍԵԱՅ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԵՐԵԽԱՆԵՐՔ

ԵՒ

ԴԱՍՏԻԱՐԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

№ 3

ՄԱՐՏ

ԹԻՖԼԻԶ
ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ ՏՊԱՐԱՆ
ՕՐԲԵԼԵԱՆ ՓՈՂՈՑ, № 1|2
1888

Дозволено цензурою, Тифлисъ, 24 Февраля 1888 г.

Типографія И. Мартиросіанца, на Орб. ул., д. № 1 и 2

«ԱՂԲԻՒՐԻ» ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԱԼԲՕՄ

ԳԱՐՈՒՆ

ՏՈՐՔ—ԱՆԳԵՂ

ԵՒ

ՀԱՅԿԱՆՈՒՇ—ԳԵՂԵՑԻԿ

ՀԻՆ ԶՐՈՅՑ

ՆԱԽԵՐԳԱՆՔ

Բացուել էր գարունը, ջրերը պղտորուել,
Սար ու ձոր կանաչել, ծաղկով զարդարուել.
Ցիծեռնը գտել է իւր բունը հերուան,
Ձինում էր, կարկատում, դնում նոր ձուան.
Օձը տաքացել էր, թողել էր իւր բուն,
Սոխակն սպասում էր վարդի բացուելուն.
Գուգարաց աշխարհը նոր կեանք էր առել,
Լոքի ու Լալուարի ձիւները հալուել.
Գետը Բողնոփորի վաղ արշալուսին,
Յորդացած վշշում է փրփուրն երեսին.
Անտառում Ուփրէթը՝ ամրոցն Արամեան,
Ջուքուել, զարդարուել է նոր-հարսի նման.
Բուրզերից խնդութեան արցունք է հոսում,
Կարծես սիրակարօտ հիւրի է սպասում.
Ամրոցի տիրուհին՝ էքնաղն ՀԱՅԿԱՆՈՒՇ,
Դեռ փափուկ անկողնում քնած է մուշ-մուշ.

Տեսնում է երազում մի մարդ ածգահա,
Մի գերան ուսին դրած՝ գալիս է ահա.
Գալիս է ածգահան ընկնում ոտքերը,
Ասում է՝ «Հայրանուշ, դու ես իմ սէրը.
Կամ ինձ այս գերանով զարկիր, սպանիր.
Կամ իմ աղաչանքըս լսիր, ընդունիր»։
Վեր կացաւ տիրուհին վազվուզ անկողնից,
Ինչպէս մի նոր արև ծովի խորքերից.
Ոսկեմազ ծամերը ճաճանչի նման
Ցածկեցին մինչև ոտք հասակն անմման.
Երեք-չորս նաժիշտներ մօտեցան կուսին,
Տօն օրուայ հագուստով նրան զուքեցին.
Նոր տեսած երազը գրաւել էր նրան,
Աչքից չի հեռանում ահռելի հսկան.
«Պենք շուտով, ասում է, մէկ հիւր կունենանք,
Պէտք է նրա առջև դուռը չբանանք.
Ես տեսայ երազում մի մարդ ահաբկու,
Եկել էր ոտքս ընկել իբրև փեսացու»...
—«Այդ հսկան, թէ կուզես իմանալ ճիշտը,—
Ասում է ժպտելով նորա նաժիշտը, —
Ելեկուայ գուսանի երգի հերոսն է,
Պասքամեան ածգահա Անգեղեայ Տորքն է.
Պարիսարեան լեռնելում՝ երդչի ասելով,
Կենում է մի հովիւ քաջ Տորք անունով.
Նա մի շատ յաղթանդամ հսկայ է զօրեղ,
Բայց սիրտը բարի է, թէև դէմքն ահեղ.
(Թող մարդ կոպիտ լինի անհարթ սարի պէս,
Միայն սիրտը չըլնի անշունչ քարի պէս).
Նրան շատ սիրում են՝ թէ մարդ, թէ գազան,
Առիւծ ու վագրեր են հօտին սպահապան.
Նա քո ցեղակիցդ է, քեզ մօտ ազգակից,
Մի պապի թոռներ էք և մէկ արիւնից.

Գուսանի ներբողը ազդել է վրրադ,
Երազում տեսել ես ազգակից Հսկադ»։
—«Պէտք է պատրաստ կենանք, ինչ էլ որ լինի,
Բերէք մէջքիս կապեմ իմ թուրն Հաւլունի.
Ամրոցի դռները ամուր փակեցէք,
Լուացէք ղլխներդ, մաքուր Հագնուեցէք.
Ես գիտեմ, երազը պիտի կատարուի,
Մենք Հիւրին կընդունենք, եթէ ներս մտնի.
Թէ փակած դռնովը ներս դալ կարենայ, .
Այդ նշան կըլինի, որ քաջ Տորքն է նա»։
Իրաւ որ քաջ Տորքն էր երազի Հսկան,
Գնանք, իմ ընթերցող, և բերենք նրան։

ԵՐԴ ԱՌԱՋԻՆ

1.

Շատ դարեր առաջ Հին Հայաստանում,
Տորք—Անգեղ սնուամբ մի մարդ էր կենում։
Տորքը չէր նման Հասարակ մարդու,
Այլ մի ածդահա և շատ ահարկու.
Աչքերը կասես մի-մի կապոյտ ծով,
Ճաճանչատորուած սրուի լուսով.
Սև-սև ունքերը՝ մութ ամպի նման՝
Բարդ-բարդ կուտակուած աչքերի վրան.
Քիթը կորընթարթ, իբրև մի բլուր,
Ատամներն ուրագ, եղունդները թուր.
Կուրծքը կասենաս մի լանջ է լեռան,
Մէջքը սարածայռ, կռները գերան.
Մի խոսքով մի գէշ և ոչ թէ Հսկայ,
Ոչ ոք տեսած չէր այնպէս ածդահա։

Տգեղ էր Տորքը և շատ էր տգեղ,
Դրրա համար էլ ասուեցաւ Անգեղ.
Տգեղ էր դէմքը և այնքան դաժան,
Որ զարհուրում էր, ով նայում էր վրան.
Ահռելի էր նա և այնքան ուժեղ,
Որ լիսուն գոմէշ չունէին մէկտեղ.
Նա դեռ պատանի ժայռեր էր ճեղքում,
Ճեղքում էր ձեռքով, ձեռքով էլ կոկում.
Ճեղքում, յղկում էր քարէ տախտակներ,
Եղունգով փորում պէս-պէս նկարներ։
Նա մի հովիւր էր, հովիւ լեռնական,
Բայց ոչ հասարակ, այլ դիւցազնական.
Առիւծ ու վագր նրան տեսնելիս՝
Սովոր շան նման մօտն էին գալիս.
Կարծում էին թէ՝ նա էլ է գազան,
Եւ նա է իրանց զօրաւոր արքան.
Փաթաթվում էին քաջի ոտներին
Եւ կաղկանձելով աղերսում բաժին.
Նա էլ տալիս էր սնունդ բաւական
Եւ հօտի վրրայ կարգում պահապան.
Ինքն այնուհետև գնում էր անտառ,
Որ սնունդ գտնի իւր ուժի համար.
Նա պոկոտում էր մեծ ծառեր հատ-հատ,
Ու շինում նրանցից մի մեծ ցանկապատ.
Անտառի շուրջը պարիսպ էր դառնում,
Մէջը վայրենիք կաշկանդուած մնում.
Եւ նա բռնում էր, բռնոտում այսպէս,
Եղնիկ, եղջերու և այլ ինչ ասես։
Քսան, երեսուն էրէ շալակած,
Գնում էր հօտը յոգնած ու քրտնած.
Առիւծն ու վագրը դէմն էին գալիս,
Քաջի ոտքն ընկնում և բարև տալիս,

Եւ խնդրում էին դիւցազն Տորքին,
Պատնակից անել Համեղ ընթրիքին։
Նա չէր շատակեր Զարայի նման,
Սիրում էր կաթը և մածունն ու թան.
Եւ չէր բարկացկոտ, այլ հեզ ու խոնարհ,
Բայց Տէրն ազատէր, թէ որ բարկանար։

2.

Մէկ անգամ գիւղում Տորքին զայրացրին,
«Անգէ՛ղ, գէ՛հ Անգեղ», յետքից գոչեցին.
Էլ չըհամբերեց, պոկեց մի մեծ ծառ,
Աւլեց նրանով ամբողջ գիւղն իսպառ.
Ասում եմ աւլեց, չըկարծէք սրբեց,
Այլ տուն, դոմ, մարաք դետնին հաւասարեց.
Փախան մարդիկը ճանճերի նման,
Էլ ո՞վ կըկանգնէր Տորքի յանդիման.
Այսպէս երբ նրա բնութիւնն իմացան,
Էլ այնուհետև սրտին չըդիպան,
Այլ մեծ յարգանքով պատուասիրեցին,
Պարերգ շինելով գովաբանեցին.
Տղէրք, աղջըկէրք՝ ձեռք ձեռքի տուած,
Եւ պարում էին, և գովում Տորքին.
Էլ այնուհետև նրա դէմքն ահեղ
Առաջուայ նման չէր թվում անգեղ։
Անգութ չէր Տորքը և ոչ էլ անգէտ,
Լաւ որմնադիր էր և ճարտարապետ.
Ահագին վէմեր նա բերաւ տաշեց
Իւր քանդած գիւղը նորմէկանց շինեց.
Եւ այնուհետև իւր ուժն ահագին
Նա գործ էր դնում միշտ դէպի բարին։

Նրանից առաջ շատ քաղաք ու գիւղ
Թալանում էին գողերն աներկիւղ,
Բայց երբ լոյս ընկաւ Անգեղ Տորք Հսկան,
Աւազակները ծակ ու ծուկ մտան.
Նա չէր գործ ածում ոչ թուր և ոչ նետ,
Միայն իւր տեսքով անում էր անհետ.
Բայց երբ թշնամին երես էր առնում,
Նա այն ժամանակ ուժին էր դիմում.
Վերցնում էր քարեր, քարեր ահագին
Եւ կարկուտի պէս թափում գլխներին:
Սև ծովի կողմից օտար թշնամիք
Թալանում էին և դերում մարդիկ.
Միշտ գալիս էին անթիւ նաւերով,
Այն էլ աշկարա, օրը ցերեկով,
Կողոպտում էին ծովափնեայ գիւղեր,
Եւ դերի տանում սիրուն աղջիկներ:
Մէկ անգամ եկան խնդրեցին Տորքին,
Որ գնայ օգնէ խեղճ ժողովրդին.
Գնաց մեր Հսկան, բայց նաւերն արդէն
Հեռացել էին Սև ծովի ափէն.
Զայրացաւ Տորքը, գոռաց, մռնչաց,
Իբրև մի առիւծ նետահար եղած.
Բլբաչափ ժայռեր սարերից պոկեց,
Փախչող նաւերի յետքից շըպրտեց.
Դղրդաց ծովը, բարձրացան ալիք,
Նաւերը դարձան շարժուն խաղալիկ.
Ահա դարձեալ ժայռ, դարձեալ դղրդոց,
Ճրջվում են նաւերն կրկին օրօրոց.
Էլի մէկ բլուր, մեծ քան զառաջին՝
Ընկնում է ուղիղ նաւերի գլխին.
Գնում են կրկին ժայռերը դունդ-դունդ,
Ջարկվում նաւերին և տանում անդունդ:

Ողջ կորան այսպէս աւազակները,
Դէպի անյատակ ծովի խորքերը.
Նրանցից միայն մէկն ազատուեցաւ,
Գլուխը պատռած՝ իւր երկիրն հասաւ,
Եւ այնտեղ այնպէս հրաշքներ պատմեց,
Որ լսողներին սարսափեցրեց.
Ահա այս անգութ բարբարոսութեան
Վերջ տուաւ իսպառ մեր զօրեղ Հսկան։

3.

Տորքի անունը շատ հռչակուեցաւ,
Մինչև արքայի ականջը հասաւ.
Մեծ թագաւորը կանչում է Տորքին,
Որ պարգևներ տայ և նայէ դէմքին.
Գնում է Տորքը մի ծառ ուսին դրած,
Ծառի ճղներից երէներ կախած.
Այնտեղ կար այծեամ ու վայրի ոչխար,
Եղնիկ, եղջերու, վարազ ու կըխտար։
Տորքի համբաւը առաջ էր գնացել
Եւ քաղաքացոց նախապատրաստել.
Խանութ ու կրպակ ողջ կողպոտեցին,
Փողով փողհարով դիմաւորեցին.
«Եկա՛ւ, հա՛ եկա՛ւ, գալի՛ս է, գալի՛ս»,
Ամենքն էլ իրար իմաց են տալիս.
Թէ ծեր, թէ մանուկ, թէ աղջիկ, թէ կին,
Եկան տեսնելու նորեկ Հսկային։
Երբ Տորքը մտաւ մեծ մայրաքաղաք,
Նրան կարծեցին շարժուն աշտարակ.
Ցիրաւ՝ նա ցած չէր աշտարակներից,
Բուրգ էր նա շինուած անտաշ քարերից։

Ծառն ուսին դրած դաւազանի պէս,
Քայլեր է անում չորս կանգուն ու կէս.
Այսպէս նա հասաւ մինչև ապարանք,
Արքայի վրայ ազդեց մեծ զարմանք.
Վայր դրաւ բեռը, բարձրացաւ վերև,
Ծնկաչոք ընկաւ արքայի առջև.
Թագաւորն ասաց, «ապրիս, ապրիս, Տորք,
Դու չես մի հատ մարդ, այլ մի ամբողջ զօրք»։
Արքայի ծունկը Տորքը համբուրեց,
Արքան էլ նրա ուսին ձեռք դրրեց։

4.

Լսել էր արքան, որ հսկայ մարդիկ
Ձեն լինում խելօք և ոչ էլ ճարպիկ,
Բայց երբ Տորքի հետ լաւ ծանօթացաւ,
Նա այս կողմանէ մի նոր գիւտ արաւ։
Տորքին նա պահեց մօտ երեք ամիս,
Հետն էր նստեցնում միշտ ճաշ ուտելիս.
—«Ի՞նչպէս ես կարծում,—մէկ օր հարցրեց,—
(Հսկայի խելքը նա փորձել ուզեց)
Ո՞րն է գերազանց, ո՞ւժը, թէ՞ խելքը»։
—«Երկուսն էլ լաւ են», ասաց քաջ Տորքը,
«Փոքրիկ ուժի մէջ չի լինիլ մեծ խելք,
Ոչ էլ ուժեղը կըլինի անխելք.
Բայց ինչ է խելքը,—ոչ ոք չըգիտէ,
Անխելքի համար խելօքն անմիտ է։
Ուրիշ է խելքը գլխապահութեան,
Եւ ուրիշ խելքը յաւիշտակութեան.
Այդ ամենքն ունին՝ թէ մարդ, թէ գազան,
Թէ խելօք լինի, թէ անմիտ անբան։
Բայց կայ մի այլ խելք, խելք դիւցազնական,

Որ հնարում է, ստեղծում է բան,
Որ մեզ տանում է միշտ դէպի բարին
Եւ մատեցնում Արարչի գահին,
Որ բանեցնում է օդին ու ջրին,
Ծառայեցնում կրակին, հողին,
Ձինում է գուլթան, կամն ու ճախարակ,
Հերկում, մշակում դաշտ ու ագարակ,
Որ քարին, փայտին տալիս է նոր ձև,
Նոր գործադրութիւն, և այն յարատև.
Այս է ճշմարիտ խելքն իմ կարծիքով,
Մարդը գազանից վեհ է միայն սրանով»...
Զարմացաւ արքան, այլ և հիացաւ,
Երբ հսկայ Տորքից այս բանն իմացաւ:

5.

Մէկ օր էլ արքան տեսաւ մեր Տորքին՝
Մէկ բլրաչափ ժայռ բռնել է ձեռքին,
Ահագին ժայռը շուռ-մուռ է տալիս,
Կարծես երեխայ լինի խաղցնելիս.
Ժայռը ճեղքում էր Տորքը ձեռքերով,
Փորում, փորփրում սուր եղունգներով.
Փորեց, փորփրեց, տաշեց, տաշտրշեց,
Վերջն արքայի պէս մի արձան շինեց.
Եւ ինչքան նման, ինչքան դեղեցիկ,
Ձորն այնպէս կարել չէր կարող դերձիկ.
Արքան կատարեալ,—ծիրանի հագած,
Բոլոր զարդերով զուքուած, զարդարուած,
Գահի վրայ բազմած, թագը դրած գլխին,
Թուրը քաշ արած, գաւազան ձեռքին,
Փառահեղ մրրքով, մարգարտով հիւսած,
Երբ տեսաւ արքան, մնաց հիացած:

6.

«Այս ի՞նչ հրաշք է», մէկ օր էլ արքան,
Տորքին նայելով՝ ասաց ինքն իրան.
«Փիղը խելօք է, թէև ահագին,
Բայց ո՞վ կըկարծէ, որ այս հսկային
Աստուած տուել է և՛ խելք և՛ հասակ,
Այլ և նկարչի հրաշալի ճաշակ.
Արդեօք՝ սէր էլ կա՞յ այս մարդու սրտում,
Բայց ո՞վ կըսիրէ սրան աշխարհում.
Ո՞րտեղ կըգտնուի այնպիսի մի կին,
Որ ուզի դառնալ սորան ամուսին.
Բայց լաւ կըլինէր, եթէ յաջողէր,
Մենք կունենայինք քաջ հպատակներ»։
Այսպէս մտածեց արքան ինքն իրան
Եւ կանչեց Տորքին, որ խօսեցնէ նրան։
—«Տո՛րք,—ասաց արքան,—ես չեմ հաւատում,
Որ սէր ունենաս քո կարծրը սրտում»։
Փպտաց մեր հսկան, ինչպէս մի ծծկեր,
Երբ մօրից լսէր, թէ արի ծիծ կեր,
Եւ սրտի սէրը իւր վառ կայծերով
Փռուեց երեսին վարդի թերթերով։
—«Իսկ ես, արքայ քաջ, ասաց մեր հսկան,
Ինձ որ ասէին, թէ կայ մի գազան,
Մի օձ, մի ծաղիկ, կամ մի անշունչ քար,
Չէի հաւատալ, որ սէր չունենար.
Երկինք ու գետինք, թէ ցամաք, թէ ծով,
Բոլոր տիեզերք լցուած է սիրով»։
—«Տորք, դու խօսում ես իբրև սիրահար,
Ընտրո՞ւ ես անշուշտ մէկին քեզ համար»։
—«Ո՞ւմ պէտք է ընտրեմ յարմար իմ սրտին,
Ես դեռ չեմ գտել ինձ նման մէկին.

Հեռու աշխարհում մեր սերնդից կան,
Բայց ես չըգիտեմ այն երկրի ճանպան.
Մէկին տեսնում եմ այնտեղ երազում,
Որպէս թէ մի խոր ձորում է կենում.
Ինձ նման անբախտ, ինձ նման մենակ,
Բայց ոչ ինձ նման անդեղ, այլանդակ.
Նա գեղեցիկ է և շատ գեղեցիկ,
Ինչպէս նոր ծաղած կարմիր արևիկ»:
—«Բայց՝ ի՞նչ ես կարծում՝ այդ գեղեցկուհին
Կըդառնա՞յ արդեօք քո ընկերուհին»:
—«Նա ինձ երազում հաստատ խօսք տուաւ,
Եւ խոստանալով՝ մի պայման դրաւ.
«Եթէ գաս», ասաց, «կռուես ու յաղթես,
Դու ինձ կըստանաս, կառնես կըբերես».
Հիմա չըգիտեմ՝ ո՞ւրտեղ կըգտնեմ,
Որ կռուեմ, յաղթեմ ու առնեմ բերեմ»:
—«Ես իմաց կըտամ իմ բդեշխներին,
Նրանք կըգտնեն քո գեղեցկուհին»:
Տորքն ուրախացաւ, բայց և ամաչեց,
Տղայի նման նա կարմրտակեց.
Արքայի ծնկան նա համբոյր տուաւ,
Եւ իսկոյն և թեթ մօտիցը վազեաւ.
Թագաւորն ինքն էլ շատ ուրախացաւ,
Որ Տորքի սիրոյ գաղտնիքն իմացաւ:

7.

Արքան հրաւիրեց կուսակալներին,
Որ այդ ժամանակ պալատումն էին,
«Կուզեմ իմանալ, ասաց, մեր երկրում
Ի՞նչպէս ցեղեր կան, ի՞նչպէս են ապրում».

(Թագաւորն ինքը չէր մեր աշխարհից,
Այլ հրաւիրուած մի ուրիշ երկրից)։
«Արդեօք մեր երկրում վաղուայ պէս չրկա՞ն
Խոշոր հսկաներ մեր Տորքի նման»։
Ամենից առաջ խօսեց Առանը,
Բաղաց աշխարհի զօրեղ իշխանը.
—«Ո՛ղջ լեր, Թագաւոր, մեր երկրում դեռ կան.
Յաղթանդամ մարդիկ ճիշտ Տորքի նման.
Նրանք կենում են լերանց խորշերում,
Մթին ձորերում և քարայրերում.
Պնդոցն են քաշվում, որ ազատ մնան,
Քեօխվի ու դզրի ոչինչ հարկ չրտան.
Տներ են շինում և գետնի տակին,
Անքար ու անփայտ, սարերի միջին.
Տեսնում ես նաև հարթ գետնի տակից
Դուխ է դուրս գալիս քառասուն տեղից.
Զըշկլվում է մարդ, թէ սա ի՞նչ բան է,
Մի՞թէ սա դիւղ է,—ո՞վ կարծիք կանէ.
Մի դուռն ես գտնում, մտնում և ահա,
Քսան, երեսուն մարդիկ ածդահա,
Մի քանի դերան կրակին դրած,
Նստած են շուրջը մրուրթնին կախած.
Իսկ նրանց մայրը՝ պառաւ ածդահան՝
Դրել է կրակին քառականթ կաթսան,
Երեք-չորս վարազ ողջ-ողջ մէջն ածած,
Ճաշ է պատրաստում մէկ թի ձեռքն առած.
Խառնում է կաթսան թիաշերեփով,
Ինչպէս մեր կանայք փոքրիկ չամչիկով.
Տունն ունի նաև անթիւ մաղարէք,
Այնտեղ են լցուած հարսն ու աղջկէրք,
Բոլորն էլ խոշոր, բոլորն էլ հսկայ,
Թէ մարդ թէ կնիկ, աղջիկ թէ տղայ.

Բայց չեն Ֆորքի պէս անտաշ ու անկաղմ,
Այլ շատ դեղեցիկ և վայելչակազմ»...
—«Ուղիղ է ասածն Առան Իշխանի,
Ասաց բդեշխը Գուգարաց երկրի.
Մեր հսկաներն էլ ձորերը մըտան,
Որ գզիրներին ոչինչ հարկ չըտան.
«Ով որ, ասում են, գզրի ձայն լըսի,
«Նա տեղն ու տեղը ձեան պէս կըհալէի.
«Մարդիկ էնդուր են այնչափ մանրացել,
«Ու մէջքներից թեքուել, կըռացել,
«Որ հարկ են տալիս գզրին ու քոխվին,
«Այն էլ դրամով, որ բնաւ չունին:
«Մենք չունինք գզիր, քեօխվա, քեաթխուդա,
«Ինդուր ենք մնացել այսպէս ածդահա»:
—«Բայց մի՛թէ իրանք դրամի պէտք չունին»,
Հարցրեց արքան Լոռու բդեշխին:
—«Դրամը պէտք է սնունդի համար,
Որ գնեն սնունդ և հագուստ յարմար.
Երկուսն էլ ունին. ունին վար ու ցան,
Ունին խոզ, ոչխար, լծկան ու կթան.
Ունին վուշ, բամբակ և որդ շերամի,
Ջանազան ներկեր և որդն կարմրի.
Կանայք մանում են, ներկում ու գործում,
Սիրուն հագուստով զուքվում, զարդարվում.
Նոյնպէս հագցնում են բոլոր միւսներին,
Գործում են գորգ, շալ, և տան անկողին,
Եւ այլ ամենայն մանր ու խոշոր բան,
Ինչ որ գործվում է և պէտք է մի տան.
Ունին եղ ու մեղր և մածուն ու թան,
Միրգ, հունդ, արմտիք, բանջար զանազան.
Աղբիւրներ ունին վճիտ, սառնորակ,
Վիրաբուժութեան գիտեն դեղ, ճարակ.

Իսկ ինչ որ չունին և պէտք է իրանց,
Փոխանակելով տալիս են միմեանց.
Գինի և օղի նրանք չեն խմում,
Մոլութիւններից հեռու են փախչում.
Եւ ապրում էլ են նրանք շատ երկար,
Ոչ մէկը չըկայ հիւանդոտ, տկար:
Բոլոր անդամներն ամբողջ համայնքի,
Ձաւակ են կարծվում մի ընտանիքի.
Այսպէս միաբան, սերտ սիրով կապուած,
Մէկ մէկու համար գլուխ յետ դրած:
Շատ հիւրասէր են և մեծահոգի.
Խիստ աւանդապահ և առաքինի»...
—«Բայց մեզ ինչ օգուտ այդ հսկաներից,
Երբ որ փախչում են հարկահաններից»:
—«Հարկից խորշում են, բայց ոչ կռուելուց,
Ո՞չ հայրենիքի պաշտպան լինելուց.
Ունին ահագին աղեղ, պարսատիկ,
Կռիւ են գնում ինչպէս հարսանիք.
Քարեր ու նետեր կարկուտի նման
Թափում են կռուող թշնամու վրան.
Իսկ երբ քար ու նետ չունին ձեռներին,
Դիմում են իրանց ուժեղ կռներին.
Մէկը հարիւրին, տասը՝ հազարին,
Ջարդում են, ինչպէս դայլը՝ ոչխարին»:
—«Եթէ այդպէս է, ազատ թողեցէք,
Այդ հսկաներից էլ հարկ մի առնէք.
Բայց «մէկ պայմանով», ասում է արքան,
Որ մեր քաջ Տորքին մի հարսնացու տան»:
—«Այդ շատ դժուար է, ասաց իշխանը,
Թէև կատարեն քո խիստ հրամանը.
Նրանց մէջ առանց մենամարտելու
Սովորոյթ չըկայ աղջիկ ուզելու.

Մրցել են տալիս փեսացուներին,
Որ աղջիկն ընկնի վերջին յաղթողին.
Բայց գործը դրանով դեռ չի վերջանում,
Յետոյ աղջիկն ու տղան են մրցում.
Եթէ փեսացուն չի յաղթում աղջկան,
Էլ այն աղջիկը չի գնում նրան»:
—«Ուղիղ մեր Տորքի երաղի նման,
Ասաց խնդալով մեծաղօր արքան.
Մենք էլ կուզարկենք մեր հսկայ Տորքին,
Թող գնայ փորձէ իւր ուժն ահագին»...

Ղ. ԱՂԱՅԵԱՆՑ

(Կըշարունակուի)

ԲԱՐԵԿԵՆԴԱՆ

Ռ ստակէս պապը մի օր Հէրու սովորականից աւելի տխուր էր։

Յետի բարեկենդանի վերջին շաբաթն էր։

Երեխայքը կտերն արևի տակին վազէ-վազ էին անում և ուրախ թռչկոտում էին։

Նրանցից միայն պապի սիրելի Աշոտը նկատեց հեռուից պապի անսովոր փոփոխութիւնն ու ջոկնուեց ընկերներից, եկաւ ծերունու առաջին չոքեց։

Փոքրիկը մինչև անդամ վախեցաւ։

Պապի ոտք ու ձեռքը դողում էին։ Նա թիկնած էր պատին յենուած՝ բայց նրա թիկունքը չէր մնում հաստատ պատին ամրացած։

—Պապի ջա՛ն, հիւանդ ե՞ս, տխուր հարցրեց Աշոտը։

—Այս ի՞նչ շաբաթ է, Աշո՛տ, իւր կողմից հարցրեց պապը։

—Շրղիտե՞ս, յետի բարեկենդանի հինգշաբթին է։

—Գնա՛ց, երեք օր մնա՛ց, մրմնջաց ինքն իրան պապը. բայց ի՞նչպէս եկաւ, ի՞նչպէս գնաց, ոչ ոք չիմացաւ։ Հա՛յ դիտի ժամանակ, ընդուր համար են ասել, անցկացած օրին օր չի հասնիլ։

Մի խոր հառաչանքի հետ պապի ճպճպան մանրացած աչքերից երկու կաթիլ արտասունք գլորուեցաւ։

—Ի՞նչ է պատահել, ձեռքերով պապի պարանոցից կախուեց Աշոտը, դու լալիս էլ ես, պապի ջա՛ն։

—Փառքիդ մեռնե՛մ Աստուած, քո տնօրէնութիւններդ անքննելի են, ի՞նչ օրում էինք, ի՞նչ սրտի տէր

էինք, Հիմի ինչ ենք, իրար չեն բունում, իմ կարճ խելքս չի Հասնում: Ես անարժան, մեղաւոր, սևերես եմ, Դու արժանաւորաց աղօթքը լսես, աւելի վատթար օրերիցն ազատես:

Թոռան ներկայութիւնը և նրա ձանձրացուցիչ թախանձագին Հարցասիրութիւնը կարծես պապի Համար չէին: Նա դողդողջուն ձեռքերը երկինք բարձրացրած՝ բազկատարած Երկնային Տեսչութեանն էր դիմել իւր Համար մի անՀասկանալի Հակասութիւն պարզելու:

—Հալածանք, քոչէ-քոչ, արբաբ, աղջիկ Հարեմները քաշել, կոռ, բէգառ, արանչիք, թալանչիք, Հաղար տեսակ նեղութիւններ, Հետն էլ՝ ուրախ սիրտ, սէր, սոՀբաթ, բարեկամութիւն, Հարևանութիւն, զատկի, բարեկենդանի անմեղ զուարճութիւններ . . . իսկ այսօր . . . այսօր Հանգիստ խիղճ, ազատ աստուածպաշտութիւն, բայց սէր, զովզ, եղբայրութիւն, սրտի մի ուրախ տրամադրութիւն . . . երբէք, երբէք . . .

—Այդ ընչե՞ր ես ասում, պապի ջան, ես ոչինչ չեմ Հասկանում, ընդՀատեց Աշոտը:

—Չա՛, լաւ միտքս բերիր, գառնուկ... դարձաւ պապը դէպի թոռը. բաս այս բարեկենդանի Համար ձեր խալֆէն, կամ ոնց որ Հիմի ասում է՛ք, վարժապետը ձեզ բան չբաշխե՞ց, բաս դուք նրան ընծայ չբտարա՞ք, բաս չբկապեցի՞ք, բաս էսօր է միայն ձեզ մոնթաթող արե՞լ, բաս էն երկու շաբաթը սարէ-սար կարդում էի՞ք:

—Ընչի՞ չբպէտք է կարդայինք, պապի ջան, ինչ ընծայ, ինչ բաշխիշ, միայն այսօր է մեզ տօն արել ի պատիւ Վարդանանց և էքուց ու միւս օրն էլ բարեկենդան է:

—Որ այդպէս է, լսիր ես քեզ պատմեմ մեր Հին ժամանակուայ բարեկենդանից մի տարուանը, ոնց որ այսօր միտքս է, քեզանից շատ Հասակով կրլինէի, բեղերս եկած մարդ էի, ինքս էլ կանդնած՝ զուլուզ էի անում:

—Ասա՛, պապի՛ Ջան, ասա՛։ Բայց սպասի՛ր ընկերներիս էլ կանչեմ, բոլորն էլ լսեն։

Հինգ-վեց երեխայք վեցից մինչև 10—12 տարեկան շուրջ բոլորեցին Պոտակէս պապին։

—Ամենից յառաջ ձեզ պէտք է ասեմ, երխա՛յք, սկըսեց պապը, որ մեր ժամանակը բարեկենդանն երկու շաբաթ էր։

Հէնց որ սուրբ Սարգսի խաշիլը կուտէին, կըվերջացնէին, միւս օրուանից գիւղն իրարի կըվիպէր։

Հիմի թող ամեն մարդ իր քթի ծակերը մաքրի ու մուխը դուրս գալու երթիկների մօտ նստի անուշ խորակների հոտովը կշտանայ։

Քէֆին ու գովղին Հաշիւ ու Համար չըկայ, բայց ես բոլորը թողնում եմ ու միայն եմ պատմում։

Այս էլ մի մոռանաք, որ քանի լուսահոգի Կարապետ աղէն—դրախտի բաժին Ներսէս Կաթողիկոսի եղբայրը—մեր գեղիցը չէր վախել Թիֆլիզ, նա ինքը պէտք է բարեկենդանի ուրախութիւնն սկսէր։

—Տղէ՛ք, բարեկենդան օրեր ա, խելքներս կորել ա, ձայն տուեց Կարապետ աղէն ու յառաջ ընկաւ դէպի Վանանց այգու ձորաբաշի տապարակ ափը։

Աշտարակու առաջաւոր, խօսքները կտրուկ իշխանները հէնց դրա համար այսօր ամեն օրուանից շուտ հաւաքուել էին Թիրանաւոր եկեղեցու պատի տակին արևակող արել, սպասում էին Կարապետ աղի դուրս գալուն։

Ամէնքը նրա քամակիցը գնացին։ Ոչ ոք չէր վստահանում բերան բանալ։ Նշան տուողն ինքը Կարապետ աղէն պէտք է լինի։

Դեռ մեր իշխանները տեղ չէին հասել, որ ձորաբաշի մեծ-մեծ հաստաբուն գեռգեռուի ծիրանանց տակին Աստուծոյ ամեն բարութիւնը փռուել էր։

Սպիտակ մի դաղաչափ փափուկ լաւաշ հացերի վրայ

կտրատած, ճիւ-ճիւ արած, խաշած հաւի իւղալի կտոր-տանքն ասես, թարփիցը նոր հանած, խլպլտալով փորե-ը մաքրած ու կենդանի-կենդանի եռման ջրի մէջ խա-շած անմահական ձուկն ասես, սեղհական հօտերից զօչը փախցրած, անժամանակ աշխարհ եկած, դմբռճիկ, պոչը ծաղիկ դառների փափուկ խաշլամէն ասես, հաստադունչ կողակ—աղը դրած ձկան հոգահամ դառան գլխից մեծ մեծ գլխախոտոցներն ասես, ձու, պանիր, Վանայ ծովի տառեխ—գինու հետ յարմարուող խորակներն ասես, որ մինը թուեմ, Աստուծոյ հազար մի բարին անհատնում փուռած էր դազալաթափ ծառերի տակին։

Ալ ու դեղին, սիպտակ ու կարմիր գինիներն եթէ շարուած գաւերիցը դատարկէիր, առու կըլլինէր, կերթար ձորումը Քասաղ գետի անմահական ջրին կըխառնուէր ու դեռ ծայրը չէր կտրուիլ։

Բարեկենդան բառը Կարապետ աղի բերանից դուրս եկաւ ու քէթխուդէքն իրանց ջահիլներին ինչ որ պէտք էր հրամայեցին։

Ներկայ եղողների բոլորի տանիցն էլ խօնչայ էր եկել։

Այս որ օրն է, վերջին աղքատի տանն էլ այսօր Աստուծոյ մի հոգին կայ, գիւղացի հարուստը մինչև որ ա-զիզ օրերն իւր աղքատ հարևանի տան հոգսը չըքաշի, իւր տան պատրաստութիւնը չի տեսնիլ։

Իսպիսի օրումը ամեն մարդի աչքն իւր դրանը պէտք է լինի ոչ ոքի կոկորդից պատառ չի կուլ գնալ, եթէ ա-պահով չըլինի, որ իւր տանտիկինը Աստուծոյ աղքատին բաժին չի հանել։

Էդպէս էլ լինում է. մեր խնայող տանտիկինը, որ սովորութիւն ունէր կերակրի համար պատրաստած նիւ-թեղէնից մի-մի փոքր յետ պահել, որի ձեռքը սովոր էր ինքն իրանից զողութեան, հիմի նա մոռացել է իւր տըն-տեսութիւնը, ամբողջ տարուան խնայածը գործ դնելու օ-

բերն են. Հինգ հոգու համար 15 մարդի բաժին է պատրաստում։

Տէրտէրը բազմեց սեղանի գլխին, Կարապետ աղէն նրա կողքին, իշխաններն էլ կարգով շարուեցին։

Հացն օրհնուեց, Կարապետ աղէն իւր պաշտօնն ըսկսեց։

—Աբեղաթոզ, մանկաթոզ է, բարիկենդան օրեր ա, խելքներս կորել ա. Աշտարակու առաջաւոր իշխաններ, ձայն տուեց մեր դեղի պարծանքս աղէն, ողջ տարին հոգիներս դուրս է գալիս տանջուելով, տան հոգսերի ու դեղի ցաւերի վրայ մտածելով բռնակալ անհաւատների բեռի ու լծան տակին աչք չբրանալով, մի քանի օր էլ մեզ անդգայութեան տանք ու ամեն վշտեր մոռանանք. ուտենք, խմենք, խաղանք, խնդանք, ահէլներս նոր ջահէլանանք, մի օր ծնուել ենք, մի օր էլ մեռնելու ենք։

Դէհ սկսենք, գաւաթները լիքը-լիքը։

Գաւերը շարժուեցին։

—Լաւ միտքս եկաւ, աջիդ մատանդ, տէր Հայր, քանի խելքներս գլխներիս է, առաջին երեք բաժակի կառավարիչը դու դարձիր, դեռ քո արժանաւոր օրհնութիւնդ ում որ հարկաւոր է տուր, միւսներն իմ ծանրութիւնն է։

—Կենդանութիւն, բերանը բաց արեց տէրտէրը, մի-մին բաժակ խմենք, ասենք շնորհաւորբարեկենդան, Աստուածմեր Լուսաւորչի Աթոռը հաստատ պահի, մեր հոգևոր Տիրոջն երկար կեանք տայ, նրա ոտքը օրհնութիւնը Հայ ազգի գլխից անպակաս անի։

—Ամէնքը ոտքի կանգնեցին, գտակները հանեցին ու տիրացու Պարտիրոսն իւր հրշտականման ձայնով «Իջմիածինն 'ի Հօրէ» շարականն երգեց։

—Այս երկրորդ բաժակովն էլ վայելեցէք ու ձեռքներդ առ Աստուած բարձրացրէք, որ մեր խեղճ Հային գե-

րութիւնից, անհաւատի լծից վրկի, ազատի, այս եռման ջրին հով ջուր ածի, մեր մեղաց համար տուած պատիժը բաւական համարի։

Նորից կանգնեցին ու զինի չէր խմածները, ամէնքը հաւասար լեղի կուլ տուին, շատ աչքերից արտասուքներ թափուեցին։

—Ես իմ պարտքը պրծնում եմ, նորից բաժակը ձեռքը առաւ տէրտէրը, այս մի բաժակն էլ խմենք, ասենք. Աստուած Աշտարակ գիւղի հիմքը հաստատ անի, մեր բանին, գործին յաջողութիւն տայ, մեր ջահէլներին կեանք ու արևշատութիւն տայ, մեզ էլ մեր երեսի ջրով մեր զաւակների մի բուռը հողին արժանի անի։

Տէրտէրը պրծաւ, Կարապետ աղէն սկսեց. ինչքան տէրտէրը տխրացրեց, սա հիմի մի երկու բաժակումն ամէնը մոռացնել տուեց։

—Ազատ հրաման եմ տալիս, որ մեր բոլոր ջահէլ-ջուհուլներն էլ բարեկենդան անեն, մուրախա՜ս, քեարդաբա՜շ . . .

Դեռ խօսքը չէր վերջացրել, տասը տեղից պատգամաւորներ եկան մի-մին դաւ գինով, մի-մին խօնչայ կերակուրեղէններով և յայտնեցին իրանց սէր ու զովղ անող խմբերի խորին յարգանքը գիւղի պաշտպաններին և իրաւունք խնդրեցին ազատ ժամանակ անցկացնելու։

—Ես ձեր ծառայ պսակուած, երեխեքանց տէր դառած, ձեր հայրերիդ առաջին բերան բանալու իրաւունք չունեցող խոնարհ որդկերանց կողմից եմ, գլուխ է իջեցնում մէկն ու իւր խօնչէն վայր դնում Կարապետ աղայի առաջին։

—Մի բաժակ գինի լցրէք դրա բերանը, հրամանք է անում աղէն և թող դնայ մեր բարեհաճ կամքը յայտնի իւր ընկերներին, թող լաւ քէֆ անեն։

—Ես ձեր գժատուտ ազատի տղէքանց ղուլլուղտարն

եմ, եկել եմ ձեր սուրբ բերանների տաք ու հովն իմանամ, ինչ է.ք հրամայում, էս տարին գլխներս փչելով անցկացրիք, եկող տարի մեր կարմիրը կապելու է.ք, թէ հէնց օրն էսօր ընկնենք գիւղի մէջը, ամէնքս մեր սիրածներին թռցնենք, գանք ձեր ոտքերը փաթաթուենք, իրաւունք խնդրենք, տէրտէրի օրհնութիւնն առնենք։

—Ձեր ոտի հող ու մոխիր քէյվանի տանտիկիններին պարգևն է, նրանք իրանց գլխի տէրերի հրամանին են սպասում, որ հոռմ նանեանց մեծ տանը, նրա շուաքի տակին մի քիչ ուրախանան, ձեզ յաջողութիւն, ջահելներին ումբը ու արև խնդրեն։

—Մենք էլ տէրտէրի գիժ մոնթերից ամենադժերն ենք, յառաջ եկան մի փոքրիկ ավսէով մի քանի աշակերտներ։ Տէրտէրի կարգին ղուրբան, մեզ մի սիպտակ սհաբդռան շաւաղաթ արաւ բարեկենդանաբաժին, գնացինք Մողնի հաւ, ձու, իւղ առանք, մեր տներից բըրինձ, կաթ, դաթայ, հալուայ գողացանք, տէրտէրենց գոմի կտերը տաղեր ենք առում, աթրմայ թռչում, քաղցր թերմուն ենք խմում ու ֆալախայ հնարողի կողքերն օրհնում, որ իր անտէր գործիքը չըհնարէր ու մեր ոտների կաշին դաղդղորիկ չածէր։

Ավսէն մէջ. տեղ տէրտէրի առաջին վայը դրին և սիռոցն յետ բաց արին։

Տակիցը դուրս եկան մի քանի կտոր չոր խորակի հետ մի լախտ և մի փալախայ։

—Տէրտէրի աջին մատաղ, խօսեց մի չարաճճին, թէ որ ինքը հրամանք չանէր, թէ երեխէք, բարեկենդան ա, մոնթաթող ա, մենք օձի մլաս կ'ուտէինք ու էս գժութիւնը չէինք անիլ, ողջ տարին, դուք՝ մեր հէր ու պապեր, մեր հոգին հանում էք, ամառն ա գալիս, այգիների ու արտերի քարերն էք ժողովել տալիս, ձմեռն ա գալիս, ամէնքդ ձեռներդ թափ էք տալիս տաք տաք

զոմերի օգէքանցումը մարքեռներ ու առակներ լսում, ինչ մեզ կոխում էք տէրտէրէնց զոմը, թէ դնացէք դոմեշների տուլնզոցի, ձիանոնց խրխնջոցի, իշանոնց զռզռոցի, կովերի բառանչոցի, լծանոնց մկրկոցի հետ դուք էլ վէչին կոլ տուէք, թօղումը խեղդուեցէք, ձայներդ գլխներդ քցեցէք, ղղլացրէք, այր իւ չան, այր ժէ ճէռան էնքան բլբլացէք, ուլթ կանոն սաղմոսի տներն էնքան զղեցէք, որ գլխներիդ ուղեղը հալչի:

Հարցնում էք արդեօք, թէ մեր մատների ծայրերն ու ոտների տակերն ինչ կրակներում են էրվում, ում մատների վերայ օրը մի հատ քանոն չրկոտրուի, նա գտակն եօթը գաղ երկինքն է ծուլ անում, ում ոտների ոլորներն օրական երեք հետ ֆալախի պարանի ոլորոցից չրճռռռայ, չրտրաքտրաքի, նա ուրախութիւնից վեր վեր է թռչկոտում:

Բարեկենդան ստեղծողի հոգին դրախտումը ծլվլայ, նա մեզ համար է մտածել, որ էս օր դանք ձեր առաջին տնկուենք, էս դժոխքի զոլծիք ֆալախի զօրութիւնը ձեզ էլ ցոյց տանք:

—Հիմի ինչ էք ուզում, ա՛յ ոտտանի ձագեր, հարցրեց Կարապետ աղէն:

—Ձեզանից խնդիրք ենք անում, որ մեզ իրկին (իրաւունք) տաք, տէրտէրին կասենք, ոտները փալախի մէջ չարբանդենք, մեր որտի մուռը հանենք: Դուք չըդիտէք որ էս քանի օրուան արած ուրախութիւնը մեր քըթիցը բերելու է սա մեծ պասի երեքշաբթի օրը. ձեր ինչ դարդն է, թէ ողջ ամեռուան կարդացած դասերս քաղուածք է տուել, որ երեքշաբթի օրը համար տանք, հիմի ասայէք մեր բողազովն ինչ կերակուր ներս կերթայ, չօռ ու ցաւ կըմարսենք, ոչ թէ բարեկենդանի անուշ խորակներ: Էնքան լինի, որ դուք մի քոմոչի աչքով անէք, մենք տէրտէրին պինդ կըչաթենք ֆալախի մէջ ու

մինչև Հաստատ խօսք չըտայ, որ քաղուածքը չի պահանջիլ, բաց թողնողը չենք։

—Արէք ինչ որ ձեր կամքն է, Հրամայեց Կարապետ աղէն, էսօր ձեզ մոնթաթող՝ վանքումն էլ արեղաթող է. Հիմի վանքի տիրացուները մի մին ասլան են դառել ու իրանց մեծաւորներին կապում կապիպոտում։

—Եալլա՛, ձայն տուին միաբերան փոքրիկներն ու յարձակուեցան տէրտէրի վրայ։

Մէկն էլ լախտն առաւ ու գլխավերևը ցցուեց։

—Աղա՛տ էք, քաղուածքը վերջացնում եմ, գնացէք, քէֆ արէք, ձայն տուեց քանիցս տէրտէրը։

Սատանի ձագերը չեն Հաւատում, ահը շատ էր քան թէ մահը, սկսեցին տէրտէրի ոտքերը ֆալախի մէջ պնդել։

Կարապետ աղի դլուխը վկա՛յ, որ քաղուածք չըկայ, երդուեց տէրտէրը։

Փոքրիկները բաց թողին քահանային և նրա աջը Համբուրեցին։ Նրանք Կարապետ աղի Հրամանովը մի տաղ էլ ասացին ու գնացին ապահով իրանց գովը կատարելու։

Ամեն տեղ խօնչայ բերողներն էլ մի դաւ գինի և մի քանի կտոր կերակուրեղէն պարգև տարան Կարապետ աղից և իրաւունք ստացան ուրախ բարեկենդան անել։

Թոտակէս պատը լուեց։

Լուել էին և երեխայքը։ Նորանց բերանները բաց էին մնացել, սպասում էին շարունակութեան։

Դեռ շատ կըսպասեն։

ՊԵՐՃ ՊՈՒՇԵԱՆՑ

ՎԱՐԴԱՆԱՆՑ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Երբ որ պարսից շղթայն դաժան
Կաշկանդել էր խեղճ Հայաստան,
Եւ մշուշը մոլար կրօնին
Պիտի սքօղէր Եկեղեցին։

Յայնժամ, ահա, կրօնի պաշտպան,
Եւ նահատակ, և ախոյեան
Հանդիսացաւ 'ի Ղաւարշան,
Մեր պաշտելի Քաջն Վարդան։

Եւ ոչ նուազ Ղևոնդ երէց,
Իւր քաջութեամբ մեզ փառք բերեց.
Մի ձեռքում խաչ, միւսում դրօշակ,
Նա խրախուսէր որպէս հրեշտակ։

Սրտով վառուած Հայ զինուորքն
Զէր ընդունում պարսից կրօնքն,
Եւ մինչ արեան կաթիլն վերջին
Պաշտպանեց իւր Եկեղեցին։
Անկաւ Վարդան, բայց նրա անուն,
Դարուց ի դար մնաց փայլուն։

Մ. Տ. ԶԱՔԱՐԵԱՆՑ

ՓՈՔՐԻԿ ՉԿՆՈՐՄՆԵՐ

ՄԱՐՏԻՆ ԼՈՒԹԵՐ

3.



ուԹերի փորձուԹեան ժամանակը տևեց երկու տարի։ Այդ միջոցին կատարում էր ամեն տեսակ դժուար աշխատանք—ավլում էր վանքի բակը, փայտ էր կտրում, ջուր կրում, քաղաքի մէջ ստաբոբիկ շրջում և ողորմուԹիւն հաւաքում Աստուծոյ տաճարի և վանական միաբանուԹեան համար։

Խարազանում էր իւր մարմինը հոգւոյ փրկուԹեան համար, շղԹաներ էր հանում, սովով և ցրտով ինքն իրան չարչարում. ցերեկները պարապում էր դրսում, գիշերները փակվում խուցի մէջ և զրեԹէ մինչև լոյս հրսկում էր սրբազան գրքեր կարդալով և աղօԹելով։—«Այս վարդապետը գրքեր է կարդում, երևի ԹէԿամենում է մեզնից խելօք դառնալ»,—ասում էին վանքի միաբաններն և տալիս էին նրան էլ առաւել ծանր աշխատանք, որպէս զի գրքեր կարդալու ժամանակ չունենար։ Բայց ԼուԹեր ամեն բանի յաղԹեց և օրինակելի միաբան դարձաւ վանքի մէջ։ ՓորձուԹեան ժամանակը լրանալուն պէս՝ նրան վարդապետ ձեռնադրեցին և անունը դրին Աւգուստին։

Զատիկանց եռանդից ԼուԹերը տկարացաւ. առաջ գօրեղ, առողջ, կարմիր այտերով մարդ էր. այժմ դալկել էր դունատ, նիհար և վտիտ։

Մի օր վանք եկաւ պապի վիկարը (գլխաւոր քննիչը), որի անունն էր Զտաուպից։ Սա լսելով միաբաններից, որ նորընծայ վարդապետը մեծ ջերմեռանդուԹիւն է ցոյց տալիս և միշտ գրքեր է կարդում, հրամայեց աբբային, որ ԼուԹերին հասարակ աշխատանքով չբռնան-

ջեն։—«Թող կարդայ», ասաց նա, «գրանից ոչ ոքի վնաս չի հասնիլ, այլ օգուտ»։

Շատ գրքեր կարդաց Լուիթերը,—կարդաց և Հին Կտակարանը, և Նորը, Սրբոց վարքը, և Պողոս առաքեալի թղթերը, և ս. Աւգուստինոսի գրուածներն և ուրիշ բազմաթիւ գրքեր։ բայց չէր կշտանում—ասես թէ մի խորհրդաւոր բան էր պտրում գրքերի մէջ և չէր գտնում։

Նրա միտքը տանջվում էր. սիրտը մաշվում էր անհանդիստ կասկածներից, որոնք ծագել էին նրա մէջ պապական հաւատի մասին։ Համ վախենում էր մեղանչելուց, համ էլ այդ հաւատն ուրանալուց—կորցրել էր իւր հանգիստն և անդադար մտածում էր. «Արդեօք ճշմարիտ է; որ պապն անսխալական է, որ նա առաքինի է, սուրբ է, որ նա իւր հաճոյանքին համեմատ ծուխեր վաճառել և ինդուլգենցիաներով առևտուր անել կարող է», և ուրիշ շատ հարցեր էր տալիս ինքն իրան, առանց մի որոշ պատասխան գտնելու։

Մի օր ելաւ դնաց հայր վիկարի մօտ և ասաց. «Շատ և շատ մեղաւոր եմ, մեծ տարակոյսներ ունիմ պապական հաւատի մասին», և պատմեց իւր մեղոսական խորհուրդները։—«Ստուած քեզ փորձում է, Լուիթեր», ասաց վիկարը. «Այդ էր պատճառը, որ նա ժանտախտ ղրկեց եղբայրներիդ, շանթահար արաւ ընկերիդ, քիչ մնաց որ դու էլ մեռնէիր.—այդ էր պատճառն, որ դու վարդապետ դարձար, ծերունի հօրդ վշտացնելով։ Մի վահատիր, —յառաջ գնա, ինչպէս որ սկսել ես. կարդա Սուրբ Գիրքը և հոգիդ կրթիրկուի»։

Լուիթերի հօր գործերն այժմ աւելի յաջող էին, քան թէ առաջ. նա հաւաքել էր իւր համար մի փոքրիկ գումար, նեղուիթեան ձեռքից արդէն ազատուել էր և պատրաստ էր սիրով ներել որդուն, եթէ միայն սա մի խօսք ասէր այդ մասին։

Մի օր պատարագ մատուցանելու կարգը Լութերին հասաւ. հայրն այդ իմանալով, շտապեց եկաւ տեսնելու, թէ ինչպէս առաջին անգամ եկեղեցական պաշտօն պիտի կատարէր։ Որդին կատարեց պաշտօնն օրինաւոր վարդապետի պէս. բոլոր պատարագը շատ հանդիսաբար և վայելուչ կերպով անցաւ։ Եկեղեցին ժողովրդով լիքն էր. ամենքը նորընծային գովում էին. հայրն ուրախութիւնից ինչ անելը չգիտէր և 20 ոսկի ընծայեց որդուն։ Պատարագից յետոյ Լութեր ճաշի հրաւիրեց բարեկամներին. ամենքը գնացին վանքի սեղանատունը։ Ճաշի ժամանակ նա յիշեց իւր հօր բարկութիւնն և ասաց. «Մի՞տդ է, հայրիկ, ինչպէս բարկացել էիր վրաս, երբ ես, առանց քեզ ականջ դնելու, այստեղ եկայ վարդապետ դառնալու համար։ Զուր էիր ստիպում ինձ, որ տէրութեան պաշտօնակալ դառնամ. ասա՛, խնդրեմ,—վարդապետ մարդն ինչո՞վ է պակաս դատաւորից կամ գիտնականից»։ Հայրը պատասխանեց. «Մարտի՛ն, Մարտի՛ն, մի՛ պարծենար. դուցէ խաբուած լինիս նենգաւոր սատանայից - զգաստացի՛ր։ Միթէ չես յիշում, ով գիտնական վարդապետ, Աստուծոյ պատուէրը, թէ—պատուեա՛ զհայր քո և զմայր, զի բարի եղիցի քեզ։—Հէ, սիրելի Մարտին, լաւ կըլինէր, որ ես աղ ու հացդ ճաշելու չըգայի, տանը նստած մնայի, չոր հաց կրծէի, քան թէ քեզնից այդպիսի խօսքեր լսէի։ —Այսպէս ասաց ծերունին, վերկացաւ սեղանից, ձին լըծեց և դարձաւ դէպի տուն։

Այս դէպքից յետոյ երկար ժամանակ որդին ամօթով մաշվում էր ծերուկի սիրտը վիրաւորելուն համար։ Վերջապէս մի նամակ գրեց նրան, թէ «նեղիր անմտիս, ով հայրիկ. ես չէի հասկանում քեզ, երբ խօսում էր քո բերանով Ինքն Աստուած»։

Հայր վիկարը տեսնելով, որ Լութերը քարոզելու շընորհ ունէր, հրամայեց նրան հանդիսաբար մի քարոզ ա-

սել ժամի մէջ։ Յետոյ մի ծուխ տուին նրան Վիտտէնբերգ քաղաքում։ Այնտեղ նա պատարագում էր և քարոզում. ժողովուրդն էլ սիրով լսում էր, որովհետև նրա լեզուն պարզ դերմաներէն էր, որ ամենքն էլ լաւ էին հասկանում։

Լութեր այդ միջոցին կամեցաւ վերջապէս կատարել իւր որդի վաղուցուայ փափագը։—«Արի՛, ասաց, Հռոմ երթամ, սրապի ոտքը համբուրեմ, սուրբ նահատակներին աղօթք անեմ. տեսնեմ—ի՞նչ կարդեր կան այնտեղ և ի՞նչպէս են գործ կատարում պատէրները։ Հռոմի մէջ գուցէ կազատուիմ մեղսական մտքերից և նորից կըգտնեմ հոգւոյս խաղաղութիւնը»։

Արձակուրդ խնդրեց հայր վիկարից, ընդունեց նրանից 10 ոսկի և ճանապարհ ընկաւ։ Ուղևորեց երկու ամիս, դիշերները վանքերի մէջ օթևանելով։ Ճանապարհին քարոզներ էր ասում, վիճում էր կրօնական խնդիրների վրայ և լաւ դիտում էր վանական միաբանների բարք ու վարքը։ Տեսնում էր վանքերի հարստութիւնն և ասում էր իւր մտքում. «Վարդապետական չէ սրանց կեանքը. շատ են պարարում իրանց փորերը»։

Հասաւ Հռոմ։ Սուրբ Պետրոսի մայր եկեղեցին որ նշմարեց, ծունր դրաւ և ասաց. «Երկրպագում եմ քեզ, ո՛վ սրբազան Հռոմ քաղաք, երիցս սուրբ քաղաք, ուր նահատակուած են այնքան մարտիրոսներ»։ Յետոյ մօտեցաւ տաճարին, ծունր կրկնեց և աստիճան առ աստիճան չոքէչոք բարձրացաւ պէպի նախագաւիթը—այնտեղ ջերմեռանդ սրտով աղօթք արաւ Աստուծոյ և իւր մեղքերին քաւութիւն խնդրեց։

Փ. ՎԱՐԴԱՆԵԱՆ

(Կը շարունակուի)

ԳԱՐՈՒՆ

Նցաւ ձմեռը, եկաւ վառ գարուն,
Զարթեց խոր քնից ամբողջ բնութիւն.
Ամեն առարկայ շունչ, հոգի առաւ,
Եւ սիրոյ ողջոյն գարնանը տուաւ։

Օդը մաքուր է, արևը պայծառ,
Կանաչ են դաշտեր, սար, հովիտ, անտառ.
Եւ ողսրզալով զեփիւռը մեղմիկ
Դալար բոյսերին ասում է նանիկ։

Ահա արտոյտը դայլայլիկներով,
Ճեղքում է օդը քնքոյշ թևերով.
Եւ սիրով վառուած՝ քաղցրաձայն սխակ,
Գտել է վարդին, երգում անուշակ։

Սարերի գլխի ձիւները յստակ,
Հալում են կաղմում կարկաչուն առուակ.
Նորա ափերին գոյն-գոյն ծաղիկներ,
Ներկայացնում են հրաշալի պատկեր։

Փայռի կատարին՝ քարին տուած թինկ,
Նստած է հովիւ, սուլում է սրինգ.
Ու նրա չորս կողմ փռուած այծ, ոչխար,
Կարծես թէ բռնած լինին լէյլի-պար։

Այսպէս ամեն տեղ խինդ ու ցնծութիւն,
Ուրախ են մարդիկ ու ողջ բնութիւն.
Գարունը բերաւ անոյշ եղանակ,
Վանեց ծուլութիւն, շնչեց աշխատանք...

ՑԱԿ. ՂԱԶԱՐԵԱՆՑ

ՄԵՆԱՔԷՄ ԳԱՄԱՂԱՑՈՒ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

(Վ. Կորուչենկոյից)

Յոպէս էին շատերը ժողովրդի միջից, այլ և շատ իմաստուններ ուսեալների միջից և ուրիշների թուումը—Մենաքէմը, Գամաղացի Եհուդայի որդին, որ արիւն էր թափել կռուի մէջ Հայրենիքի ազատութեան համար։

Հայրը կտակել էր որդուն իւր սէրն ու իւր ատելութիւնը։ Նրա սէրն էր ազատութեան սէրը, իսկ նրա ատելութիւնը—թշնամութիւն ճնշողների հետ։ Որովհետև Մենաքէմը իւր հօր նման ասում էր. «Ստորութիւն է երկրպագութիւն անել կայսրների սեղանների առաջ, որովհետև կայսրները մարդիկ են. իսկ երկրպագել վայել է միայն Աստուծոյ, որ մարդկանց ստեղծել է ազատութեան համար»։

Բացի այս՝ իմաստուն Մենաքէմը իւր ազգի թուլութիւնը ողբալով, դպրութեամբ էր պարապում և Կտակարանի գրքերից և օտարազգի գրքերից իմանում էր ամեն բան, ինչ որ կատարվում էր աշխարհի երեսին, և ինչ է չարն ու բարին, և որն է հզօր ազգերի զօրութիւնը և ինչից հպատակուածների թուլութիւնը։ Մեծ էր նա դրպրութեան մէջ և չէր նմանում ոչ գոռոզ փարիսեցոց, ոչ խոնարհ յեսսէացոց, ոչ տաճարիցը կերակրուող սադուկեցոց։ Այլ հայցասէր խելքով անդադար ճշմարտութիւն էր խնդրում, իւր հոգու ձգտումները առաջ և ոչ յետ դաձնելով։

Եւ Մենաքէմի փառքը տարածուեցաւ ժողովրդի մէջ և մինչև անգամ օտարազգիները իմաստուն դամաղացուն սուր փիլիսոփայ էին ասում, որովհետև նրա լեզուն նըման էր սուսերի, որ հարուածում է խաբեբայի խորհուրդները: Եւ Մենաքէմի սրտումը սէրն ու ատելութիւնը վառ էին բորբոքուած բոցի պէս:

Սէրն էր բոց և ատելութիւնը քամի: Որովհետև քանի սաստկանում էր գարշելի ճնշումը, Մենաքէմը տալիս էր ժողովրդին իւր սիրաբորբոք սիրտը:

Իսկ եթէ ատելութիւնը համեմատենք բոցի հետ, սէրը կըլինէր քամի, որովհետև ճնշուածների սիրուցը բորբոքվում էր ատելութիւն դէպի ճնշողները:

Եւ հիմա Մենաքէմը հզօր ձայնով զէնք վերունելու էր հրաւիրում երուսաղէմացոց և գալիլիացոց և գարդարացոց և յարձակուելում արագ իդումիացոց: Վեր կացէք, ասում էր նա, և այն ժամանակն Աստուծոյ ժամը կըխփէ Փլորի գլխին:

*
* *

Բայց ուրիշները Երուսաղէմում հակառակ կարծիք ունէին:

«Քանի որ,—ասում էին նրանք,—Փլորը պատերազմ է խնդրում, մենք պիտի հեզ լինինք և համբերող, որ չըկորցնենք և այն, ինչ որ մնացել է»:

Այսպէս էին քահանաները և աւագանին և բոլոր տաճարից կերակրուողները և մեծատունները որ վախենում էին մի գուցէ իրանց հարստութիւնը կորցնեն. ուստի շրջում էին ժողովրդի մէջ, ընկնում էին մարդկանց ոտները և խոնարհութեամբ դրկում էին աննշանների ծնկները որ համոզեն նրանց հեզ լինել և համբերող

Եւ ժողովուրդը անցաւ խոնարհութեան կողմը:

*
* *

Այն ժամանակ Փլորը վերադարձել էր Կեսարիայից և

մօտենում էր զօրագնդի հետ քաղաքին. Երուսաղէմի ժողովուրդը դուրս եկաւ քաղաքից. դիմաւորեց նրան և բարեկամութեամբ շնորհաւորեց լեգէոնին: Բայց Ֆլորը բարկացաւ:

—Թշուառներ—ասաց նա սրտմտութեամբ: Ֆիտեմ որ ձեզանից իւրաքանչիւրը սրտով ինձ ատում է, բայց ձեր շրթունքների վրայ կեղծաւորութեան ողջոյնն է . . . Զէնքը ձեռներիդ մեզ կընդունէիք, եթէ պատուի ու ճշմարտութեան մարդիկ լինէիք: Իսկ հիմա շողոքորթում են ձեր շրթունքը որ փոքր ինչ առաջ ինձ անարգում էին:

Եւ հրաման տուեց իւր զինուորներին յարձակուել հրէաների վրայ: Եւ եղաւ որ հռովմայեցոց շնորհաւորելու եկածները փախչում էին դէպի քաղաքը վախեցած հօտի նման, իսկ հռովմայեցիք վրայ էին հասնում նրանց գայլերի նման: Եւ այսպէս գիշերը հասաւ քաղաքի վրայ աղաղակների, շփոթի ու հառաչանքների մէջ . . .

Եւ առաւօտը Ֆլորը հրաման տուեց զինուորներին կողոպտել Վերին ասուած հրապարակը, և զինուորները կողոպտում էին, իսկ բոլոր հանդիպողներին կոտորում էին անգթութեամբ: Այն ժամանակ եղաւ մեծ վախուստ փողոցներումը, և մարդկանց կոտորած, և կանանց բռնաբարութիւն, և անմեղների չարչարանք: Եւ բոլոր այն օրը սպանուած հրէաների թիւը կանաց և երեխաների հետ եղաւ վեց հազար երեք հարիւր:

Ց. ՅՈՎԱՆՆԻՍԵԱՆ

(Կըշարունակուի)

ԱՖՐԻԿԱՅԻ ՊԱՏԿԵՐՆԵՐ

Եանքը, որ մեզ այնքան դեղեցիկ է թւում՝ մի պատճառն էլ այն է, որ մարդս կարող է ճանապարհորդել. բնութեան հրաշագեղ, ահեղ, անսահման, մեծատարած տեսարանները այնքան լիակատար հաճութիւն, հոգեկան գոհացում և հրճուանք են ազդում, մարդ առժամանակեայ երջանկութեան մէջ է ըզգում իրան և այդ տպաւորութիւնների դրոշմը ընդ միշտ մնում է անջնջելի նրա հոգեկան կազմուածքի վրայ։ Միայն կապուտակ ծովն ու նրա վրայ անսահման տարածուած երկնակամարը որչափ են քնքշացնում մարդուս նայուածքը և ցրւում նրա մելամաղձիկ խոհերը։ Ուստի առաջարկելով մեր սիրելի ընթերցողներին զանազան վայրերի նկարագիրներ, մենք երբեմն-երբեմն էլ պիտի չրմոռանանք տալ ծանօթութիւններ տրոպիկական աշխարհի մասին, որոնց թւում և Աֆրիկայի տեսարանների և բնակիչների մասին, որոնք վերին աստիճանի հետաքրքրական են։ Դեռ ևս շատ հին դարերում Աֆրիկան մարդկանց համար մի խորհրդաւոր գաղտնիք էր, հանելուկ էր և հին յունական իմաստասէր Արիստոտելն ասել է, որ միշտ կարելի է սպասել մի որ և նոր բան Աֆրիկայից։ Սակայն մեր դարում եւրոպացի խրոխտ և մտահարուստ, անձնանուէր գիտնականների աննկուն ճիգերով լուծուեցաւ այդ հանելուկը, անգլիացի Բեկկեր ճանապարհորդը իւր կնոջ հետ հասաւ փառահեղ Նեղոսի ակներին. ուրիշ ճանապարհորդներ ուսումնասիրեցին այդ հսկայ դետի մեծատարած ճոխ հովիտը, Աֆրիկայի ներսը, և այլն։

Այն ահագին տարածութիւնը, որ սփռուած է Նեղոսի ջրբաբաշխ լճերի շուրջը, կոչվում է Բանանի աշխարհ։ Բանանը բուսնում է այստեղ գետերի և լճերի ջրաւոր թաց ափերում, և խոնաւ նախնական ծմակներում, ուղղաձիգ, սօսատիպ արմաւենիների ստուերում, սաղարթախիտ թզենիների և այլ հասարակածի փարթամ բոյսերի հետ։

Բանանի շատ տեսակներ կան, բայց որոնք բնում են մեր ցիշած վայրերում՝ ամենից ազնիւն են, խոշոր և գերազանց հա-

մով. այս պտուղները, որոնց տասներկու հատը բաւական են մի ամբողջ օր մի մարդու համար, չեն կարող համեմատուել ոչ մի այլ մրգի հետ։ Բանանի տերևները խիստ խոշոր են՝ 12 ոտ եր-

կարութիւնով, թաւշանման, կակուղ, գունաւ կանաչ. պինդ հողմը նրանց ծայրը կտրտում է անթիւ ծոպերի. բունը նոյնպէս ամուր չէ. չընայած բանանի այդ փխրունութեան, նա իւր վրայ կրում է այնպիսի ծանրութեան մրգեր, որոնց հազիւ կարող է տանել հասակաւոր մարդը։ Ահագին ծիրանագոյն ծաղիկներից աճում են կոնաձև պտուղները, որոնք կախուած են բունից և հասնում են մինչև գետին. նրանց աճեցողութիւնը այնպէս արագ է, որ կարելի է ասել ժամերով է լինում։

Ազնիւ տեսակի հասած բանանները ունին կանաչագոյն կամ դեղնագոյն կեղև, որ հեշտութեամբ կճեպվում է գրեթէ ճերմակ, ալրոտ, հիւթալից նուշից, որի մէջ չեն պարունակվում սերմեր։ Բանանի ճիւղերը և բունը լաւ սնունդ են արածող կենդանիների համար. նրա չոր տերևները այրում են և խրճիթների կտուրներն են ծածկում. իսկ թարմ եղած ժամանակ գործ են ածում վայրենիները իրանց մարմնի մերկութիւնը ծածկելու։

Բանանի պտուղը հասած ժամանակ քաղցր է և զովացուցիչ. եթէ տապակուի իւղում կեղևի հետ, նա կըլինի շատ ընտիր և համով ուտելիք. նրա դեռ խակ պտուղները եթէ խորովուին տաք մոխիրի կամ կրակի պոզերի վրայ՝ նուշից կարելի է շինել ալիւր զանազան քաղցրաւենիք պատրաստելու համար։

Բանանից Աֆրիկայի վայրենիները պատրաստում են և մի տեսակ գինի. դրա համար բանանի տհաս պտուղները լցնում են մի փոսի մէջ, որ ծածկում են խոտով և հողով. մինչև ութ օրը նրանք հասունացած են լինում. հանում են գետնից, կճեպներից մաքրում են և նուշերը ածելով ջրով լիքը տաշտերի մէջ խառնում են և այդպէս թողնում են մի երկու օր եփը գալու համար, որից յետոյ «գինին» արդէն պատրաստ է։ Վայրենիների գլխաւոր մի հոգն էլ այդ գինու պատրաստելն է. նեգրերը խըմում են այդ ըմպելիները կոշտ ու կոպիտ անօթներով, բայց երբ գլուխները մի քիչ տաքանում է, սկսում են ուղղակի լակել տաշտերից։ Հարբենալով նեգրերը սկսում են ամենակատաղի կերպով ցատկոտել, պարել, իրանց դժոխալուր թմբուկների, փողերի ահարկու ժխորով։ Բանանի ճիւղերից շինում են թել, չուան և այլն։ Այդպիսով այդ նշանաւոր բոյսը բաւականութիւն է տալիս այդ երկրի ազգաբնակութեան ամենագլխաւոր պահանջներին։ Բանանի երկիրների բնակիչները, որոնց թիւը հասնում է հինգ միլիոնի՝ սփռուած են եօթանասուն հազար մղոն տարածութեան վը-

բայ, նշանաւոր կերպով զանազանվում են Ներքին Ափրիկայի բնակիչներից, նրանք միակ նեգրական ցեղի բնակիչներն են, որանք ամբողջ մարմինը հագուստով ծածկում են և այն աստիճան խիստ է պահպանվում այդ կարգը, որ այր թէ կին խըստագոյն պատժի կենթարկուին, եթէ զանցառութեան տան այդ կանոնը։

Հագուստները նրանք կարում են ծառերի կեղևներից, երկար վերարկուի նման ձգում են իրանց վրայ և աջ ուսի վրայ ամրացնում են կապոցով. իսկ նշանաւոր մարդիկ իրանց հագուստը պատրաստում են գազանների մորթուց, մանաւանդ գվերեզա անունով կապիկի չափազանց գեղեցիկ մորթուց։ Դուք կըհարցնէք անշուշտ, ինչպէս կարելի է ծառերի կեղևներից հագուստ շինել. նախ դրանով շատ ծառեր կարող էին փչանալ, երկրորդ

կեղևը այնքան կոշտ է և դիրաբեկ։ Սակայն մեր չիշած նեգրերն այդ երկու դժուարութեան առաջն առած են. նրանք թզենու կեղևը մաշկելով, ծառի բունը վաթաթում են բանանի թարմ տերևներով և ամրացնում են, այնպէս որ ծառը չի չորանում։ Քերթած կեղևը նախ մաքրում են չոր մասերից, ապա թրջելով ջրում սկսում են թոխմախով այնքան թակել նրան, որ

նա կակղում է և բարականում. այդ եղանակով նա մշակուելով և ի վերջոյ չորանալով, ամենաբարակ կաշիի նմանութիւն է բերում։

Շատ անգամ նախշում են այդ փայտեայ լաթերը սև և դեղին ներկերով։

Աֆրիկայի ամենանշանաւոր ծառն է բաօբաբը, որ յայտնի է իւր ահռելի և վիթխարի կազմուածքով. նրա հսկայ բունից

տարածվում են ճիւղեր, որոնք իրանց հաստութեամբ անց են մեր դարաւոր կաղնիներից։

Բաօբաբը գարնան թագուհին է, միւս եղանակներին նա մեռած, տխուր, մերկ կանգնած է լինում՝ ահագին որպէս բուսական աշխարհի մի բաբելոնեան բարձր աշտարակ։ Գարնան երեք ամիսներին նա ամենափարթամ կերպով պճնվում է խիստ թանձր սաղարթով և վարդանման հիանալի ծաղիկներով։ Այդ վիճակում բաօբաբի մեծութիւնը գեղեցկութիւնը խառնուած իրար, նրան տալիս են մի այնպիսի փառահեղութիւն և վեհութիւն, որ աննկարագրելի է։ Նրա ահագին բնի մէջ տեղաւորվում են նեգրների ամբողջ ընտանիքներ, վայրի գազաններ, և մինչև անգամ պատսպարվում են այնտեղ փոքրիկ հօտեր։ Նրա պտուղները շատ զովարար են և ոյժերը վերականգնող։ Նրանց բունի շուրջը—հաստութիւնը հասնում է մինչև յիսուն ոտնաչափի։ Բաօբաբը մեծ մասամբ առանձին է բուսնում անհատնում բարձր խոտով ծածկուած անապատների մէջ։ Երբեմն է պատահում, որ նրանք մի քանիսը միասին բուսնին։

Սակայն այս անգամ այս մի քանի նկատողութիւններով բաւականանք. Աֆրիկայի բուսական և կենդանական աշխարհը նկարագրութեան այնքան հարուստ նիւթ է մատակարարում, որ փոքրիկ յօդուածներով ոչինչ չի կարելի շինել, բայց եթէ առաջարկել մի քանի հետաքրքրական սյուժեներներ։

Յաջորդ համարներից մինում մենք կրատանք մի քանի տեղեկութիւններ Աֆրիկայի մշակուած անկիւնների մասին, ուր ոտ են դրել արդէն եւրոպացիք և ուր հիմն է ձգել արդէն քաղաքակրթութիւնը, քրիստոնէական լոյսը և դիտակցական մշակութիւնը։

ԱՄԲՐՈՍ



ՀԵՏԱՔՐՔԻՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Լուսանկարչութեան անդնահատելի ծառայութիւնը։ — Մօտ օրերս լուսանկարի օգնութեամբ հաստատել են հաշուապահութեան մատեանների մէջ եղած կեղծիքը։ Բերլինի զուտասստանատանը քիմիագէտ դօքտոր Եզիրիկը, որին՝ իբրեւ էկսպերտի՝ յանձնուած էր մի վաճառականի հաշուապահութեան մատեանները ընդնելու, լուսանկարով հանում է մատեանի մի քանի երեսները։ Այդ փորձի ժամանակ նա ի նկատի է ունենում այն հանդամանքը, որ ներկերը լուսանկարելիս տարբերվում են միմեանցից. օրինակի համար կապոյտ գոյնը համարեա թէ ապիտակ է դուրս գալիս, իսկ շաղանակագոյնը — համարեա սեւ։ Ցիշեալ մատեանները գրուած էին երկու տեսակ մելանով, մէկը գործ էին դրել սկզբումը հաշիւները գրելիս, իսկ միւսը յետոյ թուանշանները կեղծելիս։ Եւ որովհետեւ այդ երկու կերպ գրութիւնները եղած էին զանազան ժամանակ, մէկը միւսից բաւական ուշ, այդ պատճառով լուսանկարով հանածները պէտք է որ զանազանուէին միմեանցից։ Եւ յիրաւի մատեանի կասկածաւոր երեսների լուսանկարով հանելը զարմանալի հետեւանք ունեցաւ, կապտագոյն մելանով կեղծածները դուրս եկան հազիւ նշմարելի, մինչդեռ սկզբի գրածները երեսն ընկան բոլորովին սեւ գոյնով։ Քիմիական հետազօտութիւնը եւ նրանից յետոյ լուսանկարով կեղծ գրութիւնների հանելը բոլորովին շշոփելի կացուցին նրանց շինովի լինելը։ Երկրորդ դէպքում փորձը կատարուեցաւ մուրհակում արած կեղծիքի վրայ, երեւեցաւ, որ մայիս ամիսը շինած էր ապրիլ. լուսանկարի միջ մայիսը աւելի պայծառ դուրս եկաւ քան ապրիլը։ Սրանից կարելի է տեսնել, որքան մեծ օգուտ կարող է տալ լուսանկարչութիւնը դատաստանական գործերում։

—

Ձիւն Սահարայում։ — Անցեալները Սահարա անապատում մի քանի օաղիսների վրայ սկսեց տեղալ բուլա-բուլա սպիտակ ձիւն եւ մի ժամ տեւեց. կարող էք ձեզ երեւակայել օաղիսների բնակիչների վրդովմունքը այդ նրանց համար արտասովոր բնական երեւոյթի պատճառով։

—

Մահուան պատիժ ելէքտրականութեամբ։ — Նիւ-Եորքի օրէնսդրական ատեանին ներկայացրած է մի նախագիծ մահուան պատժի ամենամարդասիրական միջոցի մասին։ Այդ առաջարկութեան կազմողները եկել են այն եզրակացութեան, որ ելէքտրականութիւնը մահուան պատիժը կատարելու ամենամարդասիրական միջոցն է։ Դրա առաւելութիւնը նրանումն է՝ որ կանխատեսանում է այն սարսափելի տեսարանները, որոնք տեղի ունին կախաղանով պատժելու ժամանակ։

Յանձնաժողովը խորհուրդ է տալիս չշյանձնել դիակը ազգականներին, այլ տալ դիտնականների ձեռքը հետազօտելու. բացի դրանից յանձնաժողովը առաջարկում է մահուան պատժի նկարագրութիւնը չթոյլ տալ որ լոյս տեսնի հասարակական պարբերական հրատարակութիւններում։

—

ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

Տակը սղոց, վրէն սղոց,
Կելլէ կրկանչէ մեռելոց։

Անծին անծնի վրայ բարձին,
Անդադարի երդկէն անցկացրին։

Մէկ մարդ կայ երեք ոտ ունի։

Պստի պստի մարդիկ,
Փէտէ փէտէ շապիկ։

ԱՌԱԾ

Ամեն վնասից մի-մի խրատ,
Ոչ վնասն է պակասում, ոչ խրատ։

ԽՆԴԻՐ

Երեք խնձորը բաժանել երկու մօր և երկու աղջկան այնպէս, որ իւրաքանչիւրը ունենայ մի-մի ամբողջ խնձոր։

ՇԱՀՄԱՏ

Շահմատ խաղալու ձևն այն է, որ իւրաքանչիւր խաղացող հերթով իր ֆիգուրներից մինը մի քառակուսիից փոխադրում է միւսը. իւրաքանչիւր ֆիգուր միայն իրան յատուկ եղանակն ունի տեղափոխուելու։

Թագաւորը կարող է միայն գնալ իրան հարևան քառակուսին. այնպէս որ նա e1-ից կարող է տեղափոխուել հետևեալ ութ դաշտակներից մինը—e3, e3, e4, e5, d5, f5, d4, և d3. միայն մի բացառութիւն կայ, երբ թագաւորն ուրիշ դաշտակի — քառակուսիի — վրայով կարող է անցնել, որ պիտի յետոյ բացատրենք։

Աշտարակները տեղափոխում են ուղղահայեաց և հորիզոնական գծով. a1-ից d4, b4, e4, g4, h4, b4, a2. a3, a5, a6, a7, a8.

Փիղը կամ սպան տեղափոխվում է դիօգանալ-շեղ գծերով դէպի մօտակայ կամ հեռաւոր դաշտակը. օրինակ d5-ից նա կերթայ e4, f3, g2, b1, h6, b7, h4, b3, d7, կամ a8. իւրաքանչիւր խաղացող ունի սև կամ ճերմակ փիղ, նայած այն դաշտակին, որ նա բռնել է խաղի սկզբից։

Թագուհին տեղափոխվում է ինչպէս աշտարակները կամ փղերը, այսինքն նա կարող է գնալ ուղղահայեաց և հորիզոնական գծերով, նոյնպէս տախտակի սև ու ճերմակ դիօգանալով. e4-ից թագուհին կարող է անցնել e5, e6, e7, e8, e3, e2, e1, a4, b4, c4, d4, g4, h4, b4, d5, d6, b7, a8, f3, g2, b1, d5, h6, b7։

Ձին անում է մի քայլ հորիզոնական և ուղղահայեաց ուղղութեամբ դէպի հարևան քառակուսին և էլի մի քայլ դիօգանալով երկրորդից սկսած։ Ձին դրուած լինելով d4-ում, նա կարող է շարժուել դէպի b3, b7, c6, e6, c5,

գ3, ե2. բոլոր սպանները իրաւունք ունին շարժուիլ յառաջ և յետ, ձախ և աջ, միայն թոյլ չի տրվում անցնել այն դաշտակի վրայով, որի մէջ ֆիգուր կայ. այդ կանոնին չի ենթարկվում միայն ձին:

Ձինուորը միշտ յառաջ է գնում միայն ուղղահայեաց գծով մի քայլ դէպի կից դաշտակը. իր կանգնած տեղից խաղի սկզբում նա կարող է շարժուիլ միայն երկու դաշտակ յառաջ, այսինքն գ2-ից գ4, կամ ը7-ից ը5:

(Կըշարունակուի)

Որովհետև մինչև հիմայ մեր ընթերցողներից չկարողացան ուղարկել մեզ «Աղբիւրի» նախորդ №-ում տպուած ՐԵԲՈՒՍԻ բացատրութիւնը, այդ պատճառով 10,000 հատ փօստի մարկաներ մրցանակ ստանալու ժամանակամիջոցը երկարացնում ենք մինչև Ձատիկ: Աւելորդ չենք համարում և մի քանի կէտերը պարզել:

1) Առաջի տառը Ձ է ոմանք Ձ են կարդում.
2) Տարուայ—կարդում են տաթուայ.
3) Կաթնասուն—կարդում են կաթնանուն *).

*) «Կաթնանուն» եւ «տաթուայ» սխալ են փորագրուած. որոնք ուղղուած են, միայն մի քանի հարիւր օրինակ, այդպէս սխալ է տպուած:

Նախընթաց №-ի մէջ եղած հանելուկների բացատրութիւնը՝ 1) Բագրատ. 2) Բերան և լեզու:

Խմբագիր-Հրատարակիչ՝ ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆ